ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՔՈԼԵՋԻ) ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը (ՀՊՏՀ ԳՄ) հայտարարում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջի) բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների 2021/2022 ուսումնական տարվա ընդունելություն (հեռակա ուսուցմամբ)՝ ուսումը ՀՊՏՀ ԳՄ հետևյալ կրթական ծրագրով շարունակելու համար.

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ

N	Կրթական ծրագրի ծածկագիրը	Կրթական ծրագիր	Տեղերի քանակը (հեռակա)
1.	041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	4

Դիմորդների դիմում-հայտերն ընդունվելու են ս. թ. հուլիսի 1-ից հուլիսի 31-ը ներառյալ և օգոստոսի 15-ից օգոստոսի 30-ը ներառյալ ՀՊՏՀ ԳՄ ընդունող հանձնաժողովում: Դիմում-հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. ՀՊՏՀ ԳՄ տնօրենին հասցեագրված դիմում,

2. ավարտական փաստաթղթի բնօրինակ՝ դիպլոմ և դրա ներդիր,

3. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրության պատճենը կամ երաշխավորագիր,

4. չորս լուսանկար (3x4 չափսի),

5. անձնագիր կամ նույնականացման քարտ և դրա պատճենը

6. զինվորական գրքույկ կամ կցագրման վկայական և դրա պատճենը,

7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր (առկայության դեպքում):

Ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում

համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշման համաձայն՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99035:

Կից ներկայացված են միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ցանկը, որոնց բարձր առաջադիմությամբ շրջանավարտներին թույլատրվում է կրթությունը շարունակել ՀՊՏՀ ԳՄ -ում։

https://asue.am/upload/files/dimord-2021-2022/list.pdf

Դիմորդների ընդունելությունը կատարվում է ՀՊՏՀ ԳՄ-ում համապատասխան ընդունող հանձնաժողովում՝ ժամը 9:30 – 17:00 -ը։

Հասցե՝ Ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32,

հեռ՝ +374 93935844, (0312)-3-58-44

Հաջողություն ենք մաղթում դիմորդներին: